

Սևան համայնքի ղեկավար Սարգիս Մուրադյանի՝ Ամանորի շնորհավորանք-ուղերձը

Հարգելի համաքաղաքացիներ,

Սիրելի սևանցիներ

Կրկին տարեմուտ է, ճանապարհում ենք 2016թ-ը՝ պատմությանը հանձնելով աշխատանքում և կյանքում գրանցված ձեռքբերումներն ու հաջողությունները:

Հավատացած եմ՝ անցնող տարին մեզանից յուրաքանչյուրի կյանքում առանձնացել է մնայուն էջերով և իրադարձություններով, որոնք միաժամանակ գալիք տարվա հաջող մեկնարկի նախապայմանն են:

Ի թիվս բազմաթիվ ծրագրերի և աշխատանքների, անցնող տարին առանձնացավ նաև քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր միջոցառմամբ՝ տեղական ինքնակառավարման մարմինների՝ հոկտեմբեր ամսին կայացած ընտրություններով:

Շուրջ երկու ամիս է, ինչ ստանձնել եմ համայնքի ղեկավարի բարդ ու պատասխանատու պաշտոնը, համայնքային կյանքն ու տնտեսությունը, համայնքային բազմաբնույթ հիմնախնդիրները դարձել են իմ և համայնքի ավագանու անդամների ամենօրյա աշխատանքի առանցքը, որի բարօրությանն ու լուծմանն էլ ուղղված են մեր ողջ ջանքերը:

Սա պատեհ առիթ է բարձրաձայնելու 2017թ-ին իրականացվող ծրագրերի մասին:

Համայնքում խնդիրները շատ են, բազմաբնույթ, մարդիկ ակնկալում են կոնկրետ լուծումներ, տեսանելի աշխատանք: Տեղական իշխանություն էլ իր վրա է վերցրել մեծ պատասխանատվություն, ունի կամք, կարողություն՝ լուծելու ներհամայնքային բոլոր խնդիրները՝ սկսած քաղաքաշինությունից մինչև սոցիալական քաղաքականության ոլորտ, ապակենտրոնացված համագործակցությունից մինչև ենթակառուցվածքների բարելավում:

Գալիք և առաջիկա տարիների համար մշակված Սևան համայնքի հնգամյա զարգացման ծրագիրն էլ այն փաստաթուղթն է, որը տալիս է հստակ ձևակերպում մի շարք հարցերի՝ ինչպիսի համայնք ենք ուզում ունենալ տարիներ անց և ցանկալի արդյունքի հասնելու համար ինչ հիմնական ուղղություններ պետք է որդեգրել:

Մեր կարևորագույն նպատակն է՝ ունենալ զարգացած, կազմակերպված, հարմարավետ և ներկայանալի համայնք:

Համայնքային գերակայություն ճանաչված բոլոր ուղղություններով էլ մշակվել են գործողություններ, ավելին՝ առկա են լուրջ և հիմնարար քայլեր: Վստահ եմ, որ ձեր

աջակցությամբ, մասնակցային կառավարման պատասխանատվությամբ նպաստելու եք դրանց հաջող ընթացքին և նույնքան բարեհաջող ավարտին:

Դժվարությունները, անշուշտ, ամեն քայլափոխի են, սակայն աշխատելու ձգտումը, համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը, փոխադարձ վստահության պայմաններում աշխատելը նպաստելու են լավագույն արդյունքների գրանցմանը:

Այս տոնական պահին, երբ ի մի է բերվում արվածը, երբ ամփոփվում է անցնող տարին, ես շնորհակալություն եմ հայտնում այն կազմակերպություններին ու անհատներին, որոնք համայնքի կյանքում ունեցան իրենց ավանդն ու ներդրումը, իրենց գործելաոճով նպաստեցին մեր համայնքի զարգացմանը և տեղական իշխանության աշխատանքին:

Սիրելի համաքաղաքացիներ

Նոր հույսերով ու սպասումներով մոտենում ենք 2017-ին: Յուրաքանչյուր Ամանոր նոր մեկնարկի խորհուրդ ունի: Ուզում եմ՝ այդ մեկնարկը լինի հաջող ու հուսադրող: Յուրաքանչյուրս տեր կանգնենք մեր ստեղծածին ու ավելացնենք դրանք Նոր տարում:

Լավագույն գործերը նրանք են, որոնք իրականանում են բարի կամքով և համատեղ ուժերով: Համախմբենք մեր ուժերն ու ցանկությունները՝ ի նպաստ և ի բարօրություն Սևանի ապագայի:

2017թ-ը քաղաքական առումով լինելու է վճռորոշ. գարնանը մեզ սպասվում են ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները, որը մեր պետության զարգացման երաշխիքն է: Վստահ եմ՝ մեզանից յուրաքանչյուրը մեծ պատասխանատվությամբ է մոտենալու ընտրական այս գործընթացին:

Քաղաքական, սոցիալ-տնտեսական զարգացումները փաստում են՝ Սևանին սպասվում է խոստումնալից ապագա, սևանցուն լուրջ ձեռքբերումներ, որոնք իրողություն են դառնալու նաև համայնքի ղեկավար-ավագանի-համայնք միասնական և համատեղ աշխատանքի շնորհիվ:

Հարգելի սևանցիներ

Ցանկանում եմ, որ գալիք՝ 2017թ. դիմավորեք լավատեսական տրամադրությամբ ու նորի ակնկալիքով, թող անսպառ լինեն խինդն ու բարիքը: Ցանկանում եմ, որ Սևանը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս լինի ներկայանալի, իսկ սևանցին իր քաղաքում տեսնի իր ապագան:

Տոնական այս պահին շնորհավորում եմ նորաստեղծ ընտանիքներին, այն ընտանիքներին, որտեղ տարին հարստացավ մանկան ծնունդով:

Առանձնահատուկ շնորհավորում եմ այն ընտանիքներին, որոնց զավակներն այս օրերին հսկում են Հայաստանի և Արցախի սահմանները, ապահովում են մեր խաղաղությունն ու անվտանգությունը:

Սիրելի համաքաղաքացիներ

Ամանորի բարեմաղթանքներս եմ հղում բոլորիդ՝ մաղթելով առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն, աշխատանքային ու անձնական հաջողություններ, արժանապատիվ կյանք, վստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ: